

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՆԱՅ ՏԵԽՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Alf. Drobisch.

Մեր աշխարհում զկայուածոյ ոչինչ չի լինում: Ամենայն եղելութիւն, ամենայն երեւոյթ խիստ որոշ օրէնքով է կատարւում: Իւրաքանչիւր էակի համար գծուած է իւր գործողութեանց շրջանը, իւրաքանչիւրն ունի իւր նախատահմանաւ կոչումը, Ամենայն քան ունի մի նպատակ, որին հասնելով իւր վերայ ճշդում է այն հին առածը, թէ «մինչև այս կէտը և ոչ աւելի»: Երբ որ այդ նպատակը կատարուի, այնուհետև գործելու կարողութիւնը վերջանում է, եթէ և գործելու կամըրդ եւս զարմեալ շարունակուի: Այսպէս էլ կեանքի ընթացքը՝ իւր ծագումնից սկսած մինչև վախճանի զանազան փոփոխութիւնները՝ ճշդիւ նախագծուած է ամէն կենդանու համար: Թէ զարգացման ստորնագոյն աստիճանի վերայ կեցածի և թէ բարձրագոյն աստիճանի վերայ եղածի կամ մարդու համար: Տարբերութիւնը միայն այն է, որ զանազան սեռի կենդանու համար՝ ընտելութիւնը այլ տեղողութիւն է կարգել, որ կատարուի իւրաքանչիւրն սահմանաւ նպատակը: Այս տեղողութիւնը մարդու կենաց մէջ աւելի երկար ենք գտնում, թէպէտև անզուգահաւասար ըստ զանազանութեան ցեղի և կլիմայի, և առհասարակ այն այլևայլ պայմաններէ ու ներդրածութեանց համեմատ, որոնց որ ենթարկւում է մարդկային ազգը: Մեզ անդադար սպառնում են անակնկալ պատահականութիւնները: Արարչութեան մէջ մարդն աւելի հիւանդութիւններէ մատնուած, քան որեւէ այլ կենդանի, քան միւս արարածներն ի միտսին առնուած: Բացի հաղարաւոր ֆիզիկական պատճառներէ, որոնք մարդու կեանքը կարճեցնում են, նոյնպէս կորստաբեր են բարոյական պատճառները—նորա կրքերը, մոլութիւնները, աշխատութիւնները: Ահա այսպէս անթիւ են մարդկային կեանքին սպառնող վնասները, այսպէս անհամար են դժբախտ պատահականութիւնները, որ մարդը այլ արարածներէ հետ ի միտսին կրում է, կամ միայն իւր ընտելութեան օնպահանջութիւն են կազմում, և որով կեանքի տեղողութեան որչափութիւնը բաւական դժուար է որոշւում: Բարեբախտաբար կողմնակի հանգամանքներով, այն է ընտելութեան պատ-

մութեան և վիճակագրութեան տեղեկութիւնները փոխադարձ համեմատութիւններով, կարող ենք մի գաղափար կազմել այդ մասին:

Կենդանիների կենաց տեղողութիւնը լաւ ծանօթ չէ մեզ: Ծառերի հասակը կարելի է հաշուել իրանց տարեկան աճելութիւնների օգնութեամբ, իսկ կենդանիների տարիքը իմանալու համար՝ այսպիսի նշաններ չունինք: Մենք միայն անմիջապէս պէտք է գիտենք, թէ իւրաքանչիւր կենդանի որչափ է ապրում, բայց յայտնի է, թէ ինչ ձանձրալի, դժուարերազործելի և անվստահելի աշխատութիւն է այս բանը.

Ստորնագոյն աստիճանի վերայ կեցած կենդանիների ցեղերն առհասարակ կարճ կեանք ունեն, որ շատ շատ մի քանի տարի են ապրում: Իսկ ձկների մէջ այնպիսի տեսակներ կան, որ շատ կամաց կամաց աճում են, նշանաւոր մեծութիւն ստանում և բարձր տարիքի են հասնում: Ձոր օր մի ձկնոցի մէջ փորձել են 60 տարի շարունակ կերակրել ձուկը, Այնպիսի ծածան են բռնել, որ ծանրութեան նայելով 100 տարեկանից աւելի պիտի լինէր, քանի որ յայտնի է, թէ ամեն մի 10 տարուայ մէջ նոցա ծանրութիւնը որքան է աւելանում: Աւանդութիւն կայ, թէ 1497 թ.-ին Լատուէր դղեակի լճի մէջ բռնել են 380 գրուանքանոց դալմատուկ, որին որ խռիկի (ձկան ախանջի) վերայ պնդացրած օղակի գրին նայելով՝ ջրի մէջ ձգել են 267 տարեկառաջ, Փրիզերիկոս II Կայսեր հրամանով: Պատմում են, թէ այնպիսի կրիաներ են պատահել, որոնք բռնուելուց յետոյ շարունակել են ապրել աւելի քան մի դար: Երկարակենցաղ կենդանիների շարքումն է դասւում նաև կոկորդիլոսը: Թռչուններից ոմանք, զոր օր, արծիւ, աղաւա, կարապ, թռթակ և այլն ըստ հասարակաց կարճեաց 100 տարեկան են գտնում: Լուիսիանայի վրայ լինող իւր «Մակրօբիտակ»-ի մէջ յիշատակում է մի բազէ, որ Կապ-ից առաքուել է Լոնդոն և վրին մանեակ է ունեցել այս փորագրած բառերով. «Առ նորին Վեհափառութիւն Յակոբ, Անգլիայի կայսր, 1610»: Նա բռնուել է 1792 թ.-ին, ուրեմն առ նուազն ունեցել է 182 տարի հասակ:

Բայց այս ամէնը լոկ միայն հաւանական ենթադրութիւններ են, Տախալին հատուտ քան չգիտենք: Այլ են կաթնասունների մանուսանգընտանիների մասին տեղեկութիւնները: Աւելի ստուգութեամբ գիտենք, թէ ձին 25 տարի է ապրում, ուղար՝ 40 տարի, եղջերուն՝ 35-40 տարի, եղ՝ 15-20, շունը՝ 10-12, կատուն՝ 9-10 տարի: Առիւծը մօտաւորապէս ապրում է 20 տարի, նապաստակն ու ճագարը՝ 7-8 տարի, ծովախոզը՝ 6-7 տարի: Վիթխարի կենդանիներ

ընդ զոր օր. փիղը, ունեցողները, ձիազետներ, ծովացուրը և նմանները մեծ հասակ են ունենում: Իսկ այս ամէնից խնքնին հետևում է, որ համեմատաբար մարդս անասուններից այնքան աւելի մեծ հասակ է ստանում, որ ինչպէս մէկն ասում է, անարդարութիւն է դառնում մեր անգաղար զանգառը, իբր թէ կարճատեւ է մեր կեանքը:

Ըստ որում մեր նպատակն է հետախուզել մարդկային կենաց տարիքը, նախ պէտք է մի ռիսալ կարծիք փարատենք, եւ ռիսայն այս է. մարդկային կենաց տեղութիւնը ընտելացնողը որոշել են զանազան կերպով, ոմանք համարել են 70, ոմանք 80—90, և ոմանք մինչև անգամ 100 տարի: Մեզ թուում է, թէ այս տարբերութիւնները ծագում են պատահական կեանքը ընտելացնող հետ շփոթելուց: Արդէս զի ճիշդ պատկեր կազմենք իսկական ճշմարիտ հասակի մասին, մենք պէտք է կենաց տեղութիւնը զանազան տեսակէտներից դատ դատ հետազոտենք, այն է՝ միջին, հասարակ, ընտելացնող, զարսուղի տեղութիւնը:

Միջին կենաց տեղութիւնը կը գտնենք, եթէ ամէն հասակի պատկանող մի մեծ բազմութեան կենաց իսկական տեղութիւնները գումարենք, և ապա այս գումարը բաժանենք շոյն բազմութեան որքանութեան թուով: Այսպիսի միջին արտադրութեան մէջ պարունակվում են այն բոլոր պատահականութիւնների և հիւանդութիւնների ազդեցութիւնները, որոնք որ միասում են կեանքին, իսկ քանորդը ցոյց է տալիս այն հասակը, որ նորածին մանուկին վիճակուած է հաւանականաբար ապրելու:

Կեանքի հասարակ տեղութիւնն այն ժամանակը կը լինի, որ մանկութեան և հասուն տարիքի վտանգներից զերծ մնալով՝ անհատներից շատերն ապրում են: Այդ ժամանակը վերջանում է ծերութիւն համարուած հասակով, ուրեմն կեանքի հասարակ տեղութիւնը պէտք է համարել ծերերի միջին կեանքը:

Կեանքի ընտելացնող կամ սանձակաւոր տեղութիւնը կը լինի այն հասակը, որ իր բազանչիւր կենդանի էակին նախախնամութիւնից որոշած և շնորհած է: Իսկապէս առնելով այս հասակը պիտի վերջանայ ընտելեան կանոնաւոր ընթացքի հետ ի միասին, այսինքն առանց պատահականութիւնների, մանուսանդ հիւանդութիւնների հանդիպելու: Բայց որովհետեւ այդ սահմանին հասնել կարենալու էակը՝ բոլոր խափանող ներգործութիւններից ազատված և պաշտպանուած պիտի լինի, ապա ուրեմն ընտելեան այդ օրէնքը գրեթէ երբեք չի կատարվում, իսկ եթէ և կատարուի, այնուամենայնիւ մարդիկ այդ բանը կը կռնեն բացառութիւն:

Կեանքի արտախ կարգի կամ զարսուղի տեղութիւնը կը կազմուի ընտելացնողների շնորհով. այսինքն մենք սովոր ենք այդպէս անուանել այնպիսի հասակը, որ հասարակ տեղութիւնից աւելի է երկարում, ուրեմն իսկապէս բացառութիւն է կազմում: Այդպիսի հասակը ներհակութիւն է դառնում վաղահաս մահուամբ առաջ եկած շնորհմաների դէմ:

Այս չորս տեսակէտով ուսումնասիրուել է միայն մարդը, այն ևս վիճակագրութեան և պատմութեան շնորհով: Վիճակագրութիւնը տալիս է մեզ կեանքի միջին տեղութիւնը, պատմութիւնը՝ զարսուղի տեղութիւնը: Իսկ ընտելացնողութիւնը զարձեւել վիճակագրութեան և պատմութեան օգնութեամբ որոշում է կեանքի սանձակաւոր կամ բուն տեղութիւնը:

Նախ տեսնենք, թէ թուերի ծանօթութեամբ ինչ ենք իմանում կեանքի միջին նոյնպէս և հասարակ տեղութեան մասին: Ասում են, թէ «թուանշանը լաւագոյն ապացոյց է»: Անշուշտ այդպէս է, եթէ թուանշանը ճիշտ արտադրատու է իրողութեան իսկութիւնը: Գերմանիայի վիճակագրութիւններից կարելի է այնպիսի եղբակացութիւններ հանել, որ ճշմարտութիւնից շատ հեռու չեն լինի:

Արդ ինչ են ուսուցանում մեզ թուերը մահկանացութեան օրէնքի մասին:

Կեանքը միշտ և համապաղ վտանգի մէջ է, և զանազան հասակում զանազան չափով: Մանկութեան հասակում մահկանացութիւնը շատ մեծ է: 1895-ին Գերմանիայում վախճանել են 1 տարեկանին չհասած 331⁰/₀₀, 1—15 տարեկան հասակով 186⁰/₀₀, 15—60 տ. հասակով 234⁰/₀₀ և 60 տ. հասակից վեր 290⁰/₀₀։*

Փարիզում Ժ.Գ. դարում միջին հասակն էր 17 տարի, Ժ.Է. դարում՝ 26, Ժ.Բ. դարում՝ 32, իսկ Ժ.Բ. դարի սկզբում՝ 39²/₃ տարի: Բայց Գերմանիայում այն ժամանակից միջին հասակը բաւական պակասել է, այնպէս որ այժմ աշխատող մարդու կեանքը ընդ ամենը 28 տարի պէտք է համարուի:

Արդեօք Ժ.Գ. դարուց մինչև Ժ.Բ. դարու սկիզբը երեան եկող կեանքի տեղութեան յառաջադիմութիւնը՝ հին ժամանակներում ևս տեղի է ունեցել, թէ չէ, հաստատուպէս չենք կարող ասել: Աւելի հաւանականն այն է, թէ տեղութիւնը շատ անգամ փոփոխուել է, այն ևս ժամանակ առ ժամանակ նաեւ կրճատուել է: Սակայն հին դարերից ապացոյցներ չառննալով, ասոնք լոկ ենթադրութիւններ պիտի համարուին:

* Նշան 0/00 պիտի է կարգաւ «այս քան անհատ» կամ «հազարից այս քանը»:

Մենք այսօր միայն դիտենք, որ Գ. դարու վերջերում Ուլպիանը՝ 1000 տարուայ աշխարհահամարով՝ հոռվմայեցւոց միջին կեանքը հաշուեց 30 տարի:

Միջին հասակը ոչ միայն նորածնի համար կարելի է հաշուելով դուշակել, այլ ամենայն հասակի համար: Արդէն յիշատակեցինք, թէ Թ. դարու սկզբում նորածնի միջին հասակը հաւանական էր $39\frac{2}{5}$ տարի, ըսյց ով որ 4 տարեկան էր դառնում, նա այնուհետեւ արդէն $49\frac{1}{5}$ տարեկան դառնալու հաւանականութիւն ունէր:

Յայտնի է, որ մանկութեան հասակը մեծամեծ վտանգներէ է ենթարկուած: Մեր պապերը կարծում էին, թէ ուրիշ որոշ ժամանակներումն էլ մեր կեանքը վտանգների է հանդիպում: Զոր օր նոցա կարծում էին, թէ տարիքի այնպիսի թիւը, որ 7 ով է ըստանալու, միշտ վտանգաւոր է: Հարկաւ վիճաւագրութիւնը ոչ այս ըսնն է հաստատում, և ոչ էլ ընտանիք Բուրգալի ենթադրութիւնը իբր թէ կենտ թուերը աւելի մահահանացութիւն են արտադրում, քան լուծ թուերը:

Երկրի մահերու թիւը զանազան մասերում կենսական պայմանների տարբերութիւններից ինքնին մահաբերել կարելի է, թէ մահահանացութեան օրէնքը ըստ աշխարհաց փոփոխական պիտի լինի: Եւ այս ենթադրութիւնը հաստատուեցաւ զանազան երկրներում կազմած նմանեցումների թերթերից: Մանաւանդ 60—90 տարուայ հասակ ունեցողները մեծամեծ տարբերութիւններով են հանդիսանում:

Արդարեւ Ասիայի, Ափրիկէի, Աւստրալիայի և մոտամը Ամերիկայի ազգերի մասին ճիշտ տեղեկութիւններ չունենք, ըսյց ամէն նշաններից երևում է, որ բարեխառն և նոյն խիստ սառուցեալ գօտին աւելի ձեռնառու են կեանքի երկարութեան համար, քան հասարակածի տաք կլիման: Հիները, մանաւանդ Արիստոտէլը, Սաբաբոնը, Պլինիոսը, հակառակ կարծիք ունէին. նոքա ասում էին, թէ եգիպտացիք խիստ երկարակեաց են: Միջին դարումն էլ պնդում էին, թէ արաբացիք մեծ ծերութեան են հասնում: Բայց դոցա ամէնքը առանց թուերի են խօսում: մինչև անգամ չենք իմանում, թէ «մեծ ծերութիւն» ինչ է նշանակում դոցա գաղափարով:

Բայց ոտոյդ է այն միայն, թէ ըսցի կլիմայից ուրիշ պատճառներ ևս ազդում են մահահանացութեան թուերի մէջ մեծամեծ տարբերութիւններ գոյացնելու համար, մինչև որ մի ազգի դրացի ազգերը խիստ անհամեմատ ծերութեան հասակ են արտադրում: Եւ իրօք այս տեղ մեծ նշանակութիւն են ստանում օդի մաքրութեան, քաղաքներում բնակիչների կուտակութեան, մշակների նիւթական վիճակի աստիճանը:

պարապմանց տեսակը, կենցաղափարութեան սովորութիւնները, դպրոցական ուսումը, մանկանց խնամատարութիւնն և այլն: Այս բոլոր տարբերքի միասին ներգործութեան պէտք է վերագրել, որ մի երկրի զանազան դաւառներում մահահանացութեան հանգամանքներն այնքան տարբեր են:

Ինչպէս ասուեցաւ, կենքի տևողութիւնը բաւական չափով կախուած է օդից, ուրեմն մարդկանց պարապմունքից, որով շնչած օդը փոփոխութիւն է կրում: Այսպէս դոր օր Ֆրանկֆուրտում վեց տարուայ ընթացքում մեռել են հետեւեալ հիւանդութիւնների պատճառով՝

Շնչառութեան Թոխախի Մարսոտութեան

1000 կողակալներից	123	428	28
» հիւանդներից	90	410	51
» հացթուխներից	70	233	70
» զարեջուր հանդերձողներից	53	263	79
» պարտիզպան	147	317	61
» որմնաղիւններից	57	228	86
» անձինքներից առ			
հասարակ	103	277	49

Հաս ընական է, որ զանազան հասակի մահահանացութեան մէջ տարբեր առիւթով հանդիսանան հարուստ ու աղքատը: Ահա այդ հանգամանքի պատկերը.

ՄԱՀԿԱՆԱՅՈՒԹԻՒՆ

Հասակ	Հարսի	Աղայի
25—30 տարեկան	—	2. 22
30—35	0. 85	1. 43
35—40	1. 25	1. 85
40—45	0. 85	1. 87
45—50	1. 59	2. 39
50—55	1. 81	2. 58
55—60	2. 68	4. 60
60—65	3. 06	5. 76
65—70	4. 31	9. 25
70—75	6. 80	14. 14
75—80	8. 09	14. 59
80—85	11. 58	—
85—90	16. 29	—

Նոյն հանգամանքը լուսաբանող այլ պատկեր, միաժամանակ ծնում 1000 մարդկանցից տակաւին ապրում են

Ունեւոր Չփառ

5 տարուց յետոյ	943	656
10	938	598
20	866	566
30	796	486
40	695	396
50	557	293
60	398	172
70	235	65
80	57	9

Ուրեմն հարսի կենաց միջին տևողութիւն

նքն է 50 տարի, իսկ աղքատներ՝ 32 տարի:

Այսպէս ատածների մէջ ժողովուրդը իւր ամբողջութեամբ նկատուեցաւ: առանց սեռի խտրութեան, Բայց այդ խնդրին գալով, տեսնում ենք, որ երկարակացութեան կողմից կինն աւելի յաջող է այդ մարդուց, ինչպէս որ Բիւֆֆոնից սկսած շատ ուսումնականներ վկայել են: Սակայն թէպէտ «Թոյլ» կոչուած սեռը առհասարակ աւելի կենսունակ է, քան արական սեռը: Բայց վերջինը կարծես աւելի արտաքին կարգի ձեւութեան հասնելու է կազմակերպուած, 100 տարեկան կին համեմատաբար քիչ է պատահում:

Վիճակագրութեան հետ պատմական տեղեկութիւններն էլ առաջ բերելով, կանխաւ նկատենք, որ հին ժամանակի երկարակեցութեան օրինակները պէտք է դուրս դնուեն, նոյն իսկ Պլինիոսը, որ շատ բաներում գիւրա-հաւան է, առասպել է համարում իւր ժամանակում տարածուած կարծիքը, իբր թէ արկադեան մի քանի թագաւորները 300 տարուայ հասակից աւելի ձերութիւն են ունեցել: Նա նախատում է Բենոփոնին, որ իւր ծովագնացութիւնը նկարագրելիս չափազանցութեամբ յիշատակում է մի տիւրացի թագաւոր 600 տարեկան և նորա օրդի 800 տարեկան: Հասակի այսպիսի մեծ թուերը առաւելապէս պէտք է բացատրուին ժամանակի այլ չափերով, քան ինչ որ մենք ենք գործածում: Եղել են ազգեր, որ ամառն ու ձմեռը մի մի տարի են հաշուել, իսկ ոմանք նոյն իսկ լուսնի մի շրջանը մի տարի են համարել: Այսպէս պէտք է բացատրուի նաև առաջին մարդկանց ահագին հասակը: Զոր օր. Ս. Գրոց մեկնիչներից շատերը տեսել են, թէ Աբրահամից առաջ տարին 3, նորանից յետոյ՝ 8 և Յովսէփի ժամանակ միայն 12 ամիս անողութիւն է ունեցել: Այսպէս ուրեմն մեր այժմեան տոմարական հաշուով Ագամը ապրած պէտք է լինի ոչ թէ 930, այլ 232 տարի: Մաթուսաղան ոչ թէ 969, այլ 242 տարի և Նոյն ոչ թէ 950 տ., այլ 237 տարի:

Նոյից յետոյ թուերը նուազում են. Աբրահամը մեռաւ 175, Իսահակը 150, Յակոբը 145, Իսմայէլը 137, Սաբան 127, Մովսէսը 120, Յովսէփն ու Յեսուս 110 տարեկան: Այսպէս շարունակում են թուերը հետզհետէ նուազել և միայն Մակարայեցոյց գրքի մէջ բացատրուած յիշուած է Անտիոքոս Եպիփանէսը 149 տարեկան հասակով:

Հին աշխարհի յունաց մէջ ևս մի քանի ականաւոր մարդիկ մեծ ձերութեան են հասել: Վրեատացի Եպիմենիդէան ապրել է 153, Գորգիաս սպիեոսը 107, Դիմիտրիոսը 109, Բենո-

փիլոս երաժիշտը 105, Իսոկրատէս և Զենոն ստոյիկեանը մօտ 100 տարի: Արտաքին կարգի ձեւ հռոմայեցիների մասին յիշատակում են Պլինիոնն ու Պլինիոսը: 26-ն պահանջել նաև 100-ամեայ կանայք, Լուցինիա գերասանուհին ընծ էր դուրս գալի 100 տարեկան հասակում: Գալերի Պոնտիա գերասանուհին 104 տարեկան տակաւին ընծի վերայ էր, իսկ առաջին անգամ հանդէս էր եկել 91 տարեկան հասակում: Վեսպասիանի աշխարհահամարի ժամանակ Պարմայի մէջ երեք քաղաքացի կային 120 տարեկան և երկուսը 130 տարեկան. Պիստենչայում—մէկը 150 տարեկան, մէկը 131 տարեկան, չորսը 120 տ., վեցը 110 տարեկան: Gallia cispadana-ի աշխարհահամարի մէջ նշանակուեցան 54 անձինք 100 տ., 14 անձինք 110 տ., երկուսը 125 տ., չորսը 130 տ., չորսը 135 տ., երեքը 140 տարեկան:

Միջին ու Վերանորոգութեան դարը նոյնպէս հարուստ են արտաքին կարգի ձերերով: Հռչակաւոր ընդդէմներից մէկը նշանակել է 1000-ից աւելի 100—110 տարեկաններ, 60՝ 110—120 տարեկաններ, 29՝ 120—130 տարեկաններ, 15՝ 130—140 տարեկաններ, վեց 140—150 տարեկաններ. և այս հասակից աւելին նա առասպել է համարում: Բազմաթիւ ձերի պատմութիւնն անելով, նկարագրում է նոցա մասնակցութեամբ կատարուած «ծաղիկների խաղը», աւելացնելով, թէ բոլորի տարիքը ի միասին 800 էր:

Հարկւրամեայ մարդկանց թանգարանի մէջ պատմուած է 120 անձինքների կեանքը, որոնցից իւրաքանչիւրը ապրել է 120 տարուց աւելի: Տասներկու առասպելական ձերերից կրտսերագոյն՝ Գէորգ Վուեգերը մեռաւ 160 տարեկան, իսկ երկու աւագ՝ Պէտէր Սցանտաուն և Բիշօֆ Կենտիգերը 185 տարեկան:

Կասկած չկայ, որ այսպէս երկար ձերութիւնները շատ ու քիչ չափազանցութիւններով են զարգարած, բայց հաւաստի վկայութիւններով հաստատուած է, թէ իրօք եղել են մարդիկ, որ 150 տարուայ արտաքին կարգի ձերութեան են հասել: Անգլիայում 1483-ին ծնած Թոմաս Պարր աղքատ շինականը, որ արդէն տաս թագաւորների դահակալութիւններ տեսել էր, 1635 թ.-ին 152 տարեկան հասակում՝ իրան տեսնել ցանկացող Կարլոս 10-ի ցանկութեան համեմատ՝ եկաւ թագաւորական պալատը և կերաւ աւելի քան սովորութիւն ունէր. այդ պատճառով քիչ ժամանակից յետոյ մեռաւ: Արեան շրջանը դեռնող հռչակաւոր Հարուէյն գիւղը բաց անել տուեց և տեսաւ, որ աղիքները կատարելապէս առողջ են եղել, իսկ կրծքի կոճիկը՝ տակաւին

չտակարացած: Նորա վիպութեամբ այն մարդը դեռ էլի մի քանի տարեկան կարող էր ապրել:

Անգլիան ունի արտաքին կարգի երկարա-
կեցութեան մի օրինակ ևս: Հէնրի Զ-ն կենցաղ
ծնուել է 1501-ին, մեռել է 1670-ին: Մինչև մահ-
ուան ժամը ձկնորսութեամբ է պաշարուել, և
100 տարեկան հասակում դեռ դարձեալ կարող-
անում էր լողալ: Հունգարացի Ռովինը կամ
Ռովերը մեռաւ 1750-ին, ինչպէս ասում էին,
172 տարեկան հասակում: Նորա կին Սարա Դէս-
սէնը մեռած պէտք է լինի նորանից փոքր ինչ
առաջ 164 տարեկան հասակում, իսկ նորա ա-
ւագ որդին 115 տարին լրացրած պիտի լինի:
Այս երկարակեաց ընտանիքը յիշեցնում է Աբ-
րահամի տունը: Նորուէզցի Յովսէփ Սուրինգտո-
նը մեռաւ 1790-ին, 160 տարեկան: Զարմանա-
լիքը քիչ համարելով, դարձեալ պատմում են,
թէ նա իւր մահուանից յետոյ թողել է մի 103
տարեկան և մի 9 տարեկան որդիք:

Ֆրանսիան հարկւրամեայ հասակով մարդիկ
շատ է ունեցել: Ուսումնական Փօնտէնէլը ծնե-
ուել է 1657-ին և մեռել է 1757-ին: 1789-ին
Ազգային Ժողովի մէջ ներս բերեցին Իւրա դե-
պարտամենաից եկած մի 120 տարեկան ծերու-
կին իւր համարադրացիներէ կողմից շնորհակա-
լութիւն յայտնելու: որ նոքա իւր հայրենիքը
ընտելալութեան լծից ազատել են:

Այսբան բազմաթիւ օրինակների պատճա-
ռով, առհասարակ 100 տարուայ հասակը՝ բնա-
կան սահման պէտք է համարուի: մանաւանդ որ
ընտելութիւնն էլ նոյնն է հաստատում: ինչ-
պէս որ հետեւեալում պիտի տեսնենք, Մեր
յիշատակած օրինակներից երեւում է, որ մարդը
բացառիկ դէպքերում միայն 150 տարեկան
կարողանում է:

Արիստոտէլն առաջինն էր, որ կենդանիներ-
ի աճման, ծննդաբերութեան և կենաց տևողու-
թեան մէջ՝ նկատեց, մի որոշ յարաբերութիւն,
որ և իրօք հաստատուում է: Այս մասին Բիւֆ-
ֆոնն աշխատեց ուսումնական տեսութիւն կազ-
մել, րա ստուգապէս դանդաղանում է կրկնակի
աճումն. նախ բարձրութեան և ապա հաստա-
թեան աճումն. Այս երկու կարգի աճման տևո-
ղութիւնը պէտք է կենաց տևողութեան գործիչ
և պայման լինի: Մի տեղ Բիւֆֆոնն ասում
է. «Մարդը 30 տարեկանում ապրում է 90—100
տարեկ. շունը որ միայն 2—3 տարեկ է գործ դնում
իւր աճման համար, հետեւապէս պէտք է ապրէ
միայն 10—12 տարեկ: Ուրիշ տեղ ասել է. «Մար-
դը 14 տարեկանում կարող է 6 կամ 7 անգամ
աւելի ապրել. իսկ որովհետև եղջերուն 5 կամ
6 տարեկ է գործածում իւր աճման համար, ուս-
տի և ապրում է 7×5 կամ 7×6 տարեկ: Ան-

յայտնի է, որ այն տեղ հաստութեան աճման
մասին է խօսքը, իսկ այս տեղ բարձրութեան
մասին: Իսկ թէ առհասարակ ի՞նչ նշանով պիտի
որոշուի աճմանց ժամանակները, նորա որոշումը
կամայական էր:

Այդ նշանը դատու Ֆլուրանտ երևելի բնախօ-
սը, որ հետեւեալ կերպով բացատրեց: Մինչև որ
սակիները չեն միացած իրանց սակրազոգերի հետ
(կցուած ծայրերի հետ), կենդանին աճում է,
իսկ երբ որ անոնք արդէն միացած են լինում,
նա դադարում է աճել: Այսպէս որոշվում է աճ-
ման տևողութիւնը: Իսկ այդ տևողութեան յա-
րաբերութիւնը կենաց տևողութեան հետ մօտա-
ւորապէս համեմատ է, որպէս 1 առ 5: Արդ
սակիներէ միաւորութիւնը լքանց սակրազոգերի
հետ կատարվում է ուղտի մէջ 8-դ, ձիւ մէջ
5-դ, եզան և առիւծի մէջ 4-դ, շան մէջ 2-դ,
կատուի մէջ մէկուկէս տարուց յետոյ: Հետեւա-
պէս (նոյն թիւը 5 անգամ բազմապատկուած) իրօք
ուղտն ապրում է 40, ձին 25, եկն ու առիւծը
15—20, շունը 10—12, կատուն 9—10 տարեկ:
Մարդու մէջ միաւորութեան երեւոյթը կա-
տարվում է մօտաւորապէս 20-դ տարում,
այսա ուրեմն նորա կանոնաւոր կեանքը 100
տարեկ պիտի լինի, ինչպէս որ վիճակագրու-
թիւնն ու պատմութիւնն ևս հաւաստի են կացու-
ցանում: Հետեւապէս մի կենդանու առաւե-
լագոյն հասակը որոշելու համար, բաւական է
նորա աճման թիւը բազմապատկել 5 անգամ:

Արդ ինչիւր է, թէ արդեօք աճման և կե-
նաց տևողութեանց յարաբերութիւնը՝ ամէն
կենդանու մէջ որպէս 1 առ 5-ն է: Իրօքու-
թիւնները այդ օրէնքի ընդհանրութիւնը չեն
հաստատում: Գէթ ստորնադոյն կենդանիների
մէջ անգործադրելի է այդ բանը, Զօր օր. մի-
ջատներին՝ ձուից դուրս դալու ժամանակը մինչև
վերջին կերպարանափոխութիւնը, որ կաթնա-
սունների աճման ժամանակին է համեմատում,
աւելի երկարատե է, քան իրանց կենաց մնացած
ժամանակը: Իրանց կատարեալ զարգացումից
յետոյ, ուրեմն շատ անգամ ամբողջ տարիներից
յետոյ, նոքա մեծ մասով ապրում են միայն մի
քանի օր, կամ նաև մի քանի ժամ: Անողնաշար
կենդանիներից շատերի մէջ՝ զարգացմանից յե-
տոյ՝ կեանքը կարճ է: Նոյնը կրկնվում է ստոր-
նադոյն օղնաշար կենդանիների մէջ ևս: Չկան
բազմաթիւ տեսակների մասին յայտնի է, որ նո-
քա միշտ շարունակ աճում են և երևի թէ միայն
իրանց բարձրագոյն հասակում դադարում են
ստուարանալ:

Պարզ է ուրեմն, որ աճման և կենաց յա-
րաբերութիւնը կենդանու դասից է կախուած,
և քանի որ կենդանին աւելի բարձր կազմու թիւն

ուներ այնքան աւելի երկար է կենսաբան աճման համեմատութեամբ: Բայց խոտորումներ նկատվում են ոչ միայն կենդանու դասերի այլ և դասի կարգերի մէջ: Մենք տեսանք, որ աճման և կենաց յարաբերութիւնը 1 առ 5-ն է դիւանդանների կարգից՝ առիւծի, շան և կատուի համար: միամբակների կարգից՝ ձկու համար: որոճացողների կարգից՝ ուղտի և եղան համար: Բայց կրծողների կարգի երկու տեսակը՝ խնոտ խոտորում է այն յարաբերութիւնից: Ճագարի ուկրազոզը միանում է առաջին տարուայ մէջ, իսկ ծովախոզի սկիւրազոզը՝ արդէն եօթներորդ ամսում: Վերոյիշեալ օրէնքի համեմատ՝ ճագարի կանոնաւոր կենսաբան պիտի տեսէ 5, իսկ ծովախոզի՝ մօտ 3 տարի: Բայց յայտնի է, որ նոքա ատրում են 8 և 6—7 տարի: Ըստ այսմ աճման և կենաց տեղութեանց յարաբերութիւնը կը լինի 1 առ 8-ն և 1 առ 10-ը:

Այս բացատրութիւններից յետոյ հարց է ծագում, թէ «Մարդկային ազգի համար օր յարաբերութիւնը պիտի ընդունուի արդեօք մօտեւորների և որոճացողների նուազագոյնը, թէ կրծողների առաւելագոյն յարաբերութիւնը»: Որովհետեւ մարդն կատարելագոյն կազմութիւն ունի, աւելի վերջինը հաւանական պիտի լինի Լուիֆելանդը մարդու աճման ժամանակը 25 տարի է որոշել, իսկ անոր յարաբերութիւնը կենաց տեղութեան հետ 1:8, ուրեմն նորա հաշուով մարդու կենաց ընտանաբան տեղութիւնը պիտի լինի 200 տարի: Բայց այս բանին հակառակ է թէ պատմութիւնը և թէ վիճակագրութիւնը: Սակայն այս հակասութիւնը կարօտ է բացատրութեան: Մարդը կենդանու հետ համեմատելիս, պէտք է տեսնալ թողնել այն մեծակշիւ հանգամանքը, թէ նորա մարմնական մեքենան անդադար մշտում և թուլանում է իւր մատուր և բարոյական կենսեցով, եւ նա անշուշտ աւելի կարճ կենաց պիտի ունենար, եթէ իւր այդպիսի միասը չծածկուէր իւր կազմութեան բարձր գերազանցութեամբ: Ապա ուրեմն նորա համար՝ ըստ նախկին՝ աւելի ուղիղ պիտի համարենք 1 առ 5 յարաբերութիւնը:

Բնախօսութիւնն էլ նոյն է հաստատում: Բարձրութեան աճումը 20-դ տարւով վերջանում է: 40-դ տարւով լայնութեան աճումն է վերջանում: Այնուհետեւ մարմնի շրջապատը թէև գարձեալ կարող է տաւելանալ, բայց այս բանը ոչ թէ ըողոր գործարանների աւելի զարգացումն է, այլ լոկ միայն դիւրութիւն է կամ չաղութիւն: որ մարմնի համար անօգուտ բեռն և ծանրութիւն է: Երկարութեամբ և լայնութեամբ այսպիսի կրկնակի բարգաւաճութիւնից յետոյ, մեր կազմութեան խորքում կատարվում

է մի նոր գործ, այն է զօրացումն: Այդ բանը մարմնին տալիս է աւելի կատարելութիւն և ըողոր մասերը աւելի սնդագնում և լրացնում է, իսկ գործողութիւններն աւելի ապահով ու անվնաս է կացուցանում: Այդ վերջին գործը տեղի է ունենում 40—50 տարեկանի մէջ, կամ ըստ Ֆլուրանսի տեսում է նաեւ մինչև 65—70 տարեկան: Նորա տեսլով, զօրաւոր ծերութիւնը պստեղ է սկսվում իսկ տարեկի շարունակութիւնը հասնում է մինչև 85-ը:

Բիւֆֆոնը թէպէտ 70 տարեկան հասակում երեւտաարդներին տեսէ է. «Միթէ այսօր կենսից քաղցրութիւնը ձեզ պէս լիութեամբ չեմ վայելում»: Սակայն եթէ մի քանի գերազանց մարդիկ իրանց կենաց 70 տարեկան հասակում հոգւով և զգացմամբ տախտիկ երեւտաարդ են մընում, այս բանը ամէնի համար կանոն չի կարող դառնալ: Ընդհակառակ այդ հասակում արդէն մի քանի նշաններով սկսվում է դաւաճութիւնը: Տեսողութիւնն սկսում է թուլանալ, յիշողութիւնը տկարանալ, ուղեղը կարճրանալ: Այդ ժամանակ նուազել է սկսում ոյմերի պաշարը՝ օր-օրի գործածութեան համեմատութեամբ: Այս իրողութիւնը վաղ է սկսվում, բայց զգալի է դառնում 60-դ տարւանից յետոյ:

Վիկերման տեսէ է, «Արձ ժամանակ տիրոյն, երկայն է քաւախանութեամբ առ բարւոքն և զգաստութեամբ կենան կելոյ»: Թէպէտ մի իմաստունի խօսք է, սակայն ծերերի համար միթիւրութիւն չէ: Նոքա ուղում են ապրել ոչ միայն քաւոյ, այլ և երկու, այնպէս որ եթէ տառապանքների և չարչարանքների մէջ իրանց կենսաբան անիծեն ու մահ կոչեն, և մահը երեւայ, նոքա գարձեալ կուղենան այնչափ ցանկացած մահից փախչել: Ծերացած Գեօթէն գոչեց, «Բազցազոյն կենաց, ապրելու և գործելու գողարիկ ու թանկագին սովորութիւն, միթէ քեզանից իրօք պէտք է հրաժարուիմ»:

Եւ որովհետեւ այս զգացումը մեր ընտելութեան մէջ հաստատուած է, ուստի միշտ աշխատել են միջոց գտնել կենսից ընթացքն երկարացնելու կամ կենսից ապահով պահպանութեան համար: Այդ բանի փորձերն սկսուել են բժշկութեան հիմնաւորութեան օրից, երբ որ մտածեցին հիւանդութիւնները ապաքինել, այսինքն կենսաբան պահպանել: Ըրդէն յոյների գլխաւոր նպատակն էր կենսից խնամատարութիւնը, որ մարմնամարդութեան միջոցով էին իրագործում: Հին ժամանակներում երկարակեցութեան արուեստին ընծայել են իրանց անձը շատ շատերը: Նոյն յաւիճաւորութեամբ և եռանդով ընչառէր միջին դարը զբաղուել է մետաղների փոխակերպութեամբ և անմահական ջրի պատրաստութեամբ: Ալքիմիկոս-

ներքի կարծիքով կենացի երկարութիւնը պիտի տէ 900—1000 տարեկամ առնուազն 600 տարեկանը իսկ նորագոյն ժամանակներն էլ ունեցել են կենացը երկարացնելու յատուկ էլիքսիրներ և խորհրդաւոր գեղազիւներ. նաեւ մեր դարը երկարակեցութեան հոգեւորով իւր նախորդներից յետ չի մնացել: միայն թէ այդ արուեստի համար առաւելապէս ընտրել է՝ ժամանակի գիտութեան յառաջադիմութեան համեմատ՝ առաջապահութիւնը:

Ս. Ս.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵՆՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԷՋ

(ԲՆԵՆԱԳԱՏՈՒԹԻՒՆ ԵՆ ՈՒՍՈՒԱԾՔ)

(Նախնական) *

Ե.

ՀԱՅԿԻ ԱՌԱՍՊԵՆԸ

Հայկի ու Բէլի եւ Սմբատի ու Հեփթաղի կոխները—Հայկի առասպելի գոյութիւնը ժողովրդի մէջ աժան կերպով ոչնչացնելուց յետոյ՝ պ. Սալաթեանը Սորենացու ինքնուրոյն հեղինակութիւնն էլ չէ համարում այն ալ կազմած Սերէոսի մէջ եղած [կամ Սերէոսին կցուած] Անանունի հատուածից, Սերէոսից և Սուտ-Ապրիսթենէսից:

Մար Արասի (բայ Սորենացու) և Անանունի մէջ վաղուց նկատուած առնչութեան (այլ ինչիւր է թէ ինչպիսի յարաբերութեամբ) դէմ ոչինչ չունինք ասելու: քանի որ ինչպէս կարծում ենք, ակնյայտնի է այն: Ուստի և Հայկի առասպելի վիպականութեան մասին գրողը կարող չէ Անանունի պատմութեամբ ի նկատի չունենալ: Բայց չենք կարող ընդունել պ. Սալաթեանի սեպհական կարծիքը (եր. 120): Եթէ Ս. Սորենացին Սերէոսի Պատմութիւնից վերցրել է մի քանի գծեր Սմբատ Բագրատունու: Բուշանաց թագաւորի հետ ունեցած մեղադարտի նկարագրից, յարմարեցնելով անոնք Հայկի պատերազմին:

Բէլի հետ: Երկուսի մէջ եղած նման գծերը, որ բերում է իւր աշխատութեան Բ. մասի մէջ, եր. 21 հա. այս են. երկու դէպքում էլ թշնամի զօրքերն իրար դէմ են ելնում: Սմբատը Հեփթաղին իսկ Հայկը Բէլին սպանում են: և սպանուածների զօրքերն այդ տեսնելով փախչում են:

ՍԵՐԵՆԱՑ (եր. 66—67). «Սմբատ ժողովէ զգաւրն... գումարէ այլ զարս... և դիմեալ գնայր ի վերայ ազգին Բուշանաց և արքային Հեփթաղեայ... Եւ նա (Հեփթաղ) ընդդէմ ելանէ նորա (Սմբատայ)... Իբրեւ հասին ի ճեղի մարտին...»

ՍՈՐԵՆԱՑԻ «Եւ կոչեցեալ (Հայկայ) զգոր իւր ասէ ցնոսա. « Ելանել մեր հանդէպ ամբօխին Բէլայ դիպեալ (վարիանտ՝ դիմեալ) ջանացուք ճեղոյն՝ ուր անցեալ կայ ի մէջ խռն քաջացն Բէլ:»

ՍԵՐԵՆԱՑ. Հեփթաղ Գիւթաւալ յերկիւր կործանէ: Եւ զօրքն նորա իբրեւ ճեղի զարքայն իւրեանց զարհուրեցան և դարձան և գնացին փախսականս:

ՍՈՐԵՆԱՑԻ. Բէլ կործանի՝ յերկիւր զարկուցեալ... իսկ ամբօխն ճեղեալ զայսպիսի ահագին գործ քաջութեան փախսան դէպ երեսաց իւրեանց:

Այս է անցքի ամբողջ նմանութիւնը. մնացածը բառերի նմանութիւն է: Սերէոս գործ է ածում խառնամբոյ մակրայր, Սորենացին՝ ամբոյս զոյականը: Այնուհետեւ երկուսի մէջ էլ պատմութեան ընթացքում բայց ոչ բոլորովին համանման դէպքերում գործածուած են՝ արք. նիզակ, կուռ, մարտ, արքայ զարհուրել, յարձակիլ ի միմեանս հասանել, ծակատ: Պ. Սալաթեանն իւր մանրակրկիտ քննութեան մէջ մինչև անգամ այսպիսի նմանութիւնն էլ գծում է. «Սորհէր (Բէլ, երբ Հայկից փախչել է ու գում) ի միջոցի ամբանալ ամբօխին: և «ի մէջ երկուց ծակատուց մօրա կեղեալ (Սմբատ և Հեփթաղ) ընդ միմեանս կուռէին: Մեծ նմանութիւն զի «միջոց» բառը «մէջ» արմատից է կազմուած:

Մենք այդ նմանութիւններին արժէք չենք տալի որովհետեւ այդպիսի և այդքան նմանութիւններ, և աւելին ևս ոչ միայն Սերէոսի և Սորենացու մէջ եղած մի պատերազմի նկարագրի մէջ կարելի է գտնել, այլ և ուրիշ շատ հեղինակների: Առնենք, օրինակի համար, Եղիշէի մէջ Աւարայրի ծակատամարտը և համեմատենք մի կողմից Սերէոսի միւս կողմից Սորենացու մեղ հետաքրք:

* Տե՛ս «Արարատ» 1899 թ. համար Ժ.—ԺԱ. եր. 459: